

632.7

P-45

1931

158
ՀԱՍԻՉ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

ՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՍՏԱՏՁԵԼԻ ԳՐԱԳՍՐԱՆ

№ 21 (112)

ԲԵԿ-ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԲԱՆՋԱՐԱՆՈՑԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Յ Ե Վ

ՊԱՅԳԱՐ ՆՐԱՆՑ ԳԵՄ

ԳԻՆԸ 4 ԳՐԻՊ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

635.7

F-45

ՅԵՐԵՎԱՆ - 1931

4 MAR 2014

18038

635.7
P-45 up

ՊԵՏՏՐՍԻ ՏՊԱՐԱՆ 1509
ԳՐԱՌԵՊ. 6148 (F)
ՊԱՏ. 711
ՏԻՐԱԺ 7000



Л. БЕК-ОСЕПЯН

756

Вредители огорода и борьба против них

ԲԱՆՋԱՐԱՆՈՅԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՅԿԱՐ ՆՐԱՆՑ ԴԵՄ

Ինչպես դյուզառնտեսության մյուս ճյուղերին, բանջարանոցներին նույնպես վնասակար միջատները հակառակն վնասներ են պատճառում: Սակայն Հայաստանի բանջարանոցներն այդ տեսակետից դեռ բավականաչափ ուսումնասիրված չեն, և պայքարը բանջարանոցի վնասատուների դեմ ամենուրեք չի տարվում: Տարիներ են լինում, յերբ վնասատուների շտիպողանց թաղմանարույց, և հիվանդությունների տարածվելուց միշտում ե բանջարանոցների ամբողջ բերքը նկատի տանենալով, վոր համարյա դյուզացիական յուրաքանչյուր տնտեսություն, թեկուզ մոքք տարածությամբ, բանջարանոց ունի, պիտի յենթադրել, վոր բանջարանոցների տարածությունը Հայաստանում հավասար ե 2000 հեկտ, վորի միջին բերքը հաշվելով տարեկան 700 տուրլի, — ընդհանուր յեկամուտ կունենանք 1.400.000 տուրլի: Վնասատուների պատճառամ միասը մոտավորապես հաշվելով 20%, հետեվապես ընդհանուր բերքից մեր ստացած միասը կլինի 280.000 տուրլի:

Բանջարանոցի վնասատուները շատ-շատ են, սակայն մենք կնկարագրենք Հայաստանի բանջարանոցներում պատահողներից աչքի ընկնողներն ու դրանք մոքքները:

Բանջարանոցներում վնասատուների դեմ բոլոր

1008
35637

6756


դյուղայինները պիտի պայքարեն միասին և ընդհանուր
ուժերով: Վնասատուների դեմ չի կարելի պայքարել
զուտ-զուտ և անհատապես, վերովհետև յեթե մեկը
նրանց իր տնտեսութեան մեջ վնջնչացնի, ապա միև-
նույն է, նրանք նորից կերելան, այս անգամ արդեն
հարևան տնտեսութեանից, վորն այդ վնասատուների
դեմ չի պայքարել, նրանց չի վնջնչացրել:

Կոլլեկտիվ տնտեսութեաններում այդ պայքարը
կազմակերպելն ավելի հեշտ է: Կոլլեկտիվներն ու ար-
տելներն ունեն միևնույն նպատակներն ու ձգտումները,
իսկ դրանցից մեկը հանդիսանում է վնասատուների դեմ
պայքարելը: Մենաստեսի ունեցած մի հատ թույլ
սրակիչի փոխարին կոլլեկտիվը հնարավորութեամբ ունի
ձեռք բերելու ավելի ուժեղ մեքենա, — սկսած «Պամո-
նից» մինչև շոգեշարժ սրակիչը: Բացի դրանից, կոլլեկ-
տիվում հնարավոր կլինի պայքարը տանել սահման-
ված ժամկետներում, վոր այնքան կարևոր է վնասա-
տուների դեմ պայքարելիս: Նրանց միշտ ել ողնութեան
կզան Ա.Բ.Վ. (դյուղատնտեսութեան և անասառային տըն-
տեսութեան վնասատուների դեմ պայքարող ակց. ընկ.)
և Ստադրան (բույսերի պաշտպանութեան կայան) և
ԳԱԶԸ-Ս. փիաքիմն ու հասարակական այլ հիմնարկու-
թեանները:

ԿԱՂԱՄԻ ԹԻԹՈՒՆ

Կաղամբի թրթուրը Հայաստանի համարյա բոլոր
շրջաններում ամենատարածված վնասատուներից մեկն
է, վորը պատահում է կաղամբի լանջարանոցներում:

Սրա սպիտակ թիթեռների (նկար 1 և 2) կտրելի
յե տեսնել վաղ դարձանից մինչև ուշ աշուն:



Նկ. 1. ԿԱՂԱՄԻ ԹԻԹՈՒՆ

1, 2, Թիթեռներ, վերև և ներքև, 3, Թրթուր, 4, հարսնյակ, 5, ձվերը տեբի վրա:

Վաղ դարնան արևատ տաք սրբերին բանջարանոցներում հաճախ կարելի յե տեսնել թուշող թիթեռներին, փորոնք յերբեմն զուգընթաց են թուշում: Այդ թուշելու ժամանակ ել նրանք զուգավորվում են, վորից հետո եզերն իջնում են կաղամբի վրա և այնտեղ ել անում իրենց ձվիկները (նկար 5):

Կաղամբի տերևներն ուշադրությամբ դիտելիս կարելի յե գտնել 40-ից մինչև 60 հատ դեղնավուն ձրվիկների փոքրիկ կույտեր:

Ձվից դուրս գալուց մի քանի օր անց փոքրիկ թրթուռների խումբն սկսում և ուտել տերևի աակի յե բնի մաշկն ու փափուկ մասերը, ձեռք չտալով վերևի կողմին, այնուհետև թրթուռները մեծանալով ուտում են տերևները՝ բանալով անցքեր, կրծում տերևների յեզրերը, հաճախ թողնելով միայն դիտավոր յերակները (նկ. 3):

Սկզբնական շրջանում թրթուռները յինում են գեղին գույնի, խի հետո, յերբ հասնում են հասուն զբության, ստանում են դեղին-կանաչավուն գույն՝ սև բծերով և ծածկված են նոսր ու կարճ մազիկներով:

Մեկ զլուխ կաղամբի վրա պատահում և 20-30 հատ հասուն թրթուռ, փորոնք վոչ միայն ուտում են տերևները, այլ կեղտոտում են իրենց արտաթորության ներով, վորից և փչանում, հոտում և կաղամբը:

Մի քիչ ժամանակ անց թրթուռները քանի դնում փոքրանում են, տեղափոխվում զանազան խտանրի, ցանկապատերի ու պատերի վրա և կերպարանափոխվում ու դառնում են հարսնյակներ (նկ. 4):

Դրանից 7-8 օր հետո հարսնյակներից դուրս են

գալիս սպիտակ թիթեռներ, փորոնք նույնպես իրենց ձվիկներն անում են կաղամբի վրա:

Ձվից դուրս գալուց մինչև թիթեռ դառնալը տեղում և 7-8 շաբաթ, այնպես վոր գարնանից մինչև աշուն ստացվում և յերկու-յերեք սերունդ:

ՊԱՅԳԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Վոջնչացնել մոլախոտերը, մանավանդ գարնանը, յերբ դեռ կաղամբը անկված չլինելու պատճառով նրանք դեպի իրենց են դրավում թիթեռներին և կեր մտաակարարում դարգացած թրթուռներին:

2. Ծխել ու վոջնչացնել ձվիկներն ու ջահել թրթուռները 7-8 օրը մեկ անգամ, մանավանդ թիթեռների թուշելու ժամանակ:

3. Ոխտ չանկել կաղամբը, վորովհետև խիտ անկված կաղամբը դատարկ և ստացվում, բացի դրանից սրտկելու ժամանակ թունավոր հեղուկը բոլոր տերևների վրա չի ընկնում:

4. Սրտկել պարիզյան կանաչով, պատրաստելով հետևյալ կերպ՝

ա) պարիզյան կանաչ	200 գրամ
բ) չհանդրած կիր	400 »
գ) ջուր	144 լիտր (12 գուլլ)

Վորպեսզի լուծվածքը լավ կզլի բույսերին, հարկավոր և նրան ավելացնել սոբենի կամ մի ուրիշ ալյուր, յուրաքանչյուր 12 լիտր ջրին 100 գրամ ալյուրի հաչվով:

5. Հանձնարարվում և սրտկել նաև տաք յեղանակին բլրական բարիումով, վորի լուծված օր շատ հեշտ

ե պատրաստել, վորովհետեւ վոչ կիր և սահանջում և վոչ եւ ճիշտ կշռել:

120 լիտր ջրի մեջ պետք է լուծել 2-3 և կես կիր ջրորական բարիում և ապա ավելացնել 100 գրամ մ վացքի սոդա:

Քլորական բարիումը կարելի չե սկզբում ասք ջրով լուծել կաթնայի մեջ և հետո լցնել ջրով պատրաստած տակառի մեջ:

Թունավոր նյութերով սրսկելու ժամանակ պետք է պահանջել հետևյալ կարգը.

1. Չպետք է սրսկել ուժեղ քամու ժամանակ և վոչ ել անձրևից առաջ ու դրանից հետո:

2. Սրսկել մեքենայի խողովակի ծայրը պահելով կաղամբի տերևներից $\frac{1}{4}$ -1 մետրից վոչ մոտ, հակառակ դեպքում՝ լավ չի սրսկի. սրսկիչ մեքենայի խողովակն արագ շարժել, վորպեսզի կաթիլները մանր վնեն ու տարածվեն համահավասար չափով:

3. Հեղուկը նախքան սրսկիչ մեքենայի մեջ լցնելը պետք է խառնել տակառի մեջ, վորպեսզի թունավոր մասը չնստի տակառի տակ:

4. Չսրսկել կաղամբը հավաքելուց 2 շաբաթ առաջ, կամ թե գործածելուց տուալ լվանալ ջրով:

Կաղամբի տակ յեղած մեկ հեկտար տարածություն վրա ծախվում է 360 լիտր ջուր, հետեվապես և մոտ 8 կիր ջրորական բարիում:

Թունների հետ գործ ունենալիս պետք է շատ զգուշ լինել: Աշխատանքից հետո պետք է լվացվել սապոնով և մաքրել ամանեղենն ու սրսկիչ մեքենան:

ԿԱՂԱՄԻ ՑԵՑԸ


Պարնանն ու ամուսնը բանջարանոցային բուսակառուցության վրա յերբեմն բավականին մեծ քանակությամբ յերեվում են մուգ կանաչագույն թրթուռներ դեղին կամ կանաչագույն գլխարկով (նկ. 6):

Այդ թրթուռները շատ գյուրաշարժ են և առաջին իող դիպչելուց վոստայնով իջնում են հողի վրա: Վրանքն անցնելուց հետո նրանք նորից բարձրանում են բույսի վրա: Մեղ մոտ Հայաստանում նրանք գլխավորապես վնասում են կաղամբի սածիլներին, սակայն ավելի ջրի չափով, քան կաղամբի թրթուռը: Փոքր հասակում այդ թրթուռներն ուտում են տերևի մաշկը միայն, հետագայում նրանք տերևն ամբողջովին ծակծրկում են (նկ. 7):

Թրթուռները դուրս են դալիս ձիկներից, վորոնց ամուսն են թիթեռները. վերջիններս կոչվում են կաղամբի ցեց: Այդ ցեցի թեվերի յերկարությունը 17 մմ, առաջին թեվերը գորշ-մոխրագույն, յետեվիները նույնպես մոխրագույն (նկ. 11):

Այդ ցեցի թրթուռները գլխավորապես թռչում են գիշերները. եղբրը ձու ածում են (նկ. 8) տերևի յերեսի կողմի վրա՝ մեկական հատ կամ փոքր կույտներով: Այդ ձվերից, ինչպես վերն ասվեց, շուտով դուրս են դալիս թրթուռներ, վորոնք մեծանալով հենց տերևի վրա յեղ դաննում են հարսնյակներ (նկ. 9 և 10): Ձմեռում է հարսնյակը:

Հայաստանի պայմաններում կաղամբի ցեցը, բոտ յրեւութին, տալիս է յերեք սերունդ. սակայն ամենավտանդավորը առաջին սերունդն է, այդ պատ-



Եկ. II. ԿԱՂԱՄԻ 853

8. Քրթուս, 7. Գնասված անրի, 8. ցիցի ձվերը, 9. Կարանյակ,
 10. Քրթուսի բոժոժը անրի վրա, 11. Կողմնիցիցի Քրթուսը,
 12. Քրթուսը ծալված վիճակում:

ճառով ել նրա դեմ դիտավորապես սխտի պայքարել
 պարենանը:

ՊՈՅԳԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Չափել թրթուռներին յերբեմն հաջողվում է վո-
 չքնչացնել սճառներով, նրանց առատ կերպով թրջելով,
 100 գրամմ կանաչ ոճառը լուծելով 12 լիար ջրի մեջ:
 Այլեւի հասուն թրթուռների դեմ կարելի յե պայքարել
 պարիզյան կանաչի լուծույթով՝ 12 գրամմ պարիզյան
 կանաչը լուծելով 12 լիար ջրի մեջ: Վարպետի հեղու-
 կը լավ կալի տերուններին, լուծույթին կարելի յե ամի-
 ւացնել 1/2 բաժակ շիշ:

Գիծիական աշդ միջոցներեց բացի, անհրաժեշտ է՝
 1) վաղ գարնանն իր ժամանակին բանջարանոցը մաք-
 րել մաշխտոտերեց և վոչնչացնել աշդպիսիք, 2) աշնանը
 կամ վաղ գարնանը բանջարանոցը կրկնահերկ անել,
 3) ստողը բույսերն անեցնել լավ սերմերեց:

Մի քանի հիպինակներ հանձնարարում են կողմաբը
 փոշոակ մոխրով, սակայն վորքան իրական է աշդ մի-
 խոցը— պարզված չէ:


ԻՇԱԽԱՐԱՆՉ (ԱՐՁՈՒԿ)

Իշախտանեչը մնատում է ամեն տեսակի բույսերին
 ինչպես բանջարանոցում, այնպես և դաշտերում և աշ-
 դիներում:

Նրա պտուճառած մնտան այն է, վոր բանալով էր
 ճանապարհը հողի վերնաշերտում, նա կարում է բույ-
 տերի արմատները:

Վարպետի իմամտնը, թե ինչպիսի միջոցներով և

ինչ ժամանակ ամենից լավ և պայքարել նրա դեմ, հարկավոր է խմանալ, թե ինչպես և ասորում իշխառանքը:



Ն. 4. III. ԻՇԽԱՐԱՆՆԵՐ

Իշխառանքը ձմեռում և հողի մեջ էր թրթռու յնդած ժամանակաշրջանում, թեև պատահում է, վաղ ձմեռում և նաև հասունացած վիճակում:

Վաղ զարնանը, որերը տաքանալուց հետո, նա սկսում և էր վնասարար աշխատանքը: Ձմեռվա քաղցից հետո, մի քիչ կերակրվելով մայիսին, լիակ մի շաբաթ տևողությամբ հունիսին, իշխառանքը լիովին զարգանում և և սկսում զուգավորվել:

Բեղմնավորված եղերը հողի 8-13 սանտ. խորության մեջ շինում են իրենց բնիկ բուսուցի մեծութան, հողի կոշտի ձևով, վորտեղ և ամուս են իրենց ձվերը:

Իշխառանքը չափազանց բեղմնավոր և, այսինքն շատ բազմացող է. նա 150-ից մինչև 300 ձու յն ածում: 10-15 որից հետո ձվերից դուրս են գալիս ջահեր իշխառանքները (թրթուռները), վորտեղ ամուսվա ընթացքում մեծանում են, հետո ձմեռում և մյուս տարվա գարնանին արդեն հասնում հասուն վիճակի: Հետև

Վարար իշխառանքի ձվից դուրս գալուց մինչև հասունանալը տեղում և մոտավորապես մեկ տարի:

Սովորաբար իշխառանքների տված վնասը տեղում և գարնանից մինչև հունիսի վերջը, յերբ նրանք ձմեռելուց հետո քաղցած են լինում. յերբ ուտելիքը քիչ է լինում, այն ժամանակ նրանք առանձնապես վնասում են ծխախոտի, յեղիպտացորենի ծխերին, բոստաններին, ջահեյ ծառերին և մի շաբաթ տեղերում նաև բամբակին:

Սրանից յերեվում է, վոր ամենից լավ և իշխառանքներին վնասցնել վաղ զարնանը, յերբ նրանք դեռևս չեն բազմացել:

Վաղ զարնանը, յերբ մուխտտերը դեռ քիչ են լինում, քաղցած իշխառանքները մեծ ախորժակով հարձակվում են մասաղ ցանքերի և տունկերի վրա:

Ահա հենց այդ ժամանակ, ոգտվելով այդ հանդամանքից, քաղցած իշխառանքներն պետք է սրբ թունավորված կեր, վորն ուտելուց նա շատ շուտ վոչնչանում է:

ՊԱՅՏՈՐԻ ՄԵՂՈՑՆԵՐԸ

Թունավորված կերը պատրաստում են հետևյալ ձևով. վերցնում են յեղիպտացորեն կամ ցորեն և մկնդեղ այն հաշվով, վոր 80 մաս (ըստ թաշի) հատիկին ընկնի 3 մաս մկնդեղ, որինակ՝ 16 կիր յեղիպտացորենին 600 դրամ մկնդեղ:

Հատիկն ու մկնդեղը լցնում են կաթսայի մեջ, յորը ամում այնքան, վոր կանդնի յեղիպտացորենից 10 սանտ. բարձր, և յնացնում այնքան, մինչև յեղիպտացորենի հատիկները բոլորովին փափկեն:

Յեզեան յեղիպտոսացորենը փոռւմ են խտրի կամ բրեզեհնտի վրա և հովացնում : Չուտ մկնդեղի փոխարեն կարելի չե գործածել նաև մկնդեղային նատր, սակայն սա պետք է վերցնել կրկնակի չափով, քան մկնդեղն ենք վերցնում :

Այս ձեւով պատրաստված թունավոր կերը ցանքոսից 1-2 շաբաթ առաջ շաղ են տալիս և թեթև վոցոխում, վորպեսզի կերը մտնի հողի մեջ մինչև 3 սանտ : Խորութեամբ, նաև վորպեսզի թունավոր կերը թռչուններն ու կենդանիները չուտեն :

Չերմացնելու և ջերմացաններում այդ հրապուրիչ կերը դնում են իշխառանչի ճանաղարհներին, հողի մեջ վոչ խորը : Քանի վոր մկնդեղն ու մկնդեղային նատրը շատ ուժեղ թույներ են, ուստի անհրաժեշտ է աշխատանքից հետո ձեռքերը և այն ամանները, վորտեղ թույն են պատրաստել, խնամքով լվանալ, վորպեսզի պատահարար մարդիկ չթունավորվեն :

Իշխառանչի դեմ պայքարի մի ուրիշ միջոց են հանդիսանում նաև վորտող փոսերը : Աշնանը այն տեղերում, վորտեղ շատ իշխառանչներ են յեղել, վարում են 35-40 սանտ : Խորութեամբ և 70-75 սանտ : յերկարութեամբ ու լայնութեամբ փոսեր, մեկը մեկից 5-6 մետր հեռավորութեամբ :

Այդ փոսերը լցնում են ձիու կիսաքայքայված աղբով և վերեվից հող լցնում : Իշխառանչները հաճախքով հավաքվում են այդ փոսերի մեջ ձեռնելու : Ուշ աշնանը կամ վաղ գարնանը այդ վորտացող փոսը քանդում են և վոչնչացնում բոլոր իշխառանչներին :

Բացի դրանից անհրաժեշտ է ստուգել բանջարանոցների ու դաշտերի մոտ յեղած պոմադրի կույտերը :

վորտեղ կարող են հավաքված լինել իշխառանչները ձեռնելու համար, և այնտեղ բոլորին վոչնչացնել :

ԿՍՂՍՄԻ ԼՎԻՃԸ


Հայաստանի համարյա բոլոր շրջաններում կազամբը ուժեղ կերպով վնասված է լվիճներից : Սակայն նրա դեմ նույնիսկ ամենահասարակ ու պարզ միջոցներով պայքարելը լավ հետեւյալներն են տալիս : Հարկավոր է միայն իմանալ, թե ինչպես է տարում այդ լվիճը և ինչպես պիտի նրա դեմ պայքարել :

Ամբողջ ամսվա ընթացքում կաղամբի լվիճը (նկ. 15) բաղմանում է, տալով կենդանի դավակներ (թրթուրներ), վորոնք աշխարհ գալուց 15-20 որ հետո կատարյալ դարդացման են հասնում, վորոնք իրենց հերթին, կենդանի ծնվածների միջոցով, տալիս են նոր սերունդ : Այնպես վոր հունիսին արդեն լվիճը բաղմանում է խոշոր չափերով : Լվիճը մեծ խմբերով ապրում է տերևի յետեվի յերեսի վրա : Այստեղ նրանք ծծում են տերևի հյութը, վորից տերևները կուչ են դալիս, դեղնում են, իսկ ուժեղ վարակված լինելու դեպքում շուտով բոլորովին չորանում են :

Լվիճների չափազանց շատ տարածված լինելու դեպքում, իհարկե, բերքի մասին խոսք անդամ լինել չի կարող :

Աշնանն արդեն լվիճն այլևս կենդանի թրթուրներ չի ծնում, այլ միայն ձու յե ածում : Զվերը շատ մանր է, սև ու փայլուն, հասարակ աչքով անտեսանելի : Լվիճն իր ձվերն ածում է բանջարանոցում մնացած կաղամբների արմատների և մի քանի մուլխոտերի վրա : Հավորդ ասերին ձվերից դուրս են դալիս թրթուրներ :

թոււներ, վորո՞ք սկզբում կերակրվում են մոլախա-
տերի հյութով, իսկ հետո անցնում են տնկած կաղամբ-
ների վրա, վորտեղ սկսում են բազմանալ վերը նկա-
րադրված ձևով:



Նկ. IV. ԿԱՂԱՄԻ ԼՎԻՃ

1. Լվիճի եզը, վորը գորնանը համառը կենդանի եզեր և ծնում:
2. Լվիճի եզը, վորը ամուսնացած վերջում զանազան բույսերի վրա գնում և ձմեռող ձվեր:
3. Թեղավոր եզը, վորը բույսից բույս թռչելով՝ ծնում և կեն-
դանի վիճակներ:
4. Զանազ ձվեր:

Ընդհանուր դժերով ծանոթանալով Լվիճի կյանքի
հետ, դժվար չե տալ նաև նրան վրչնչացնելու պարզ
ձևվերը: Յերը կաղամբի վրա Լվիճ յերեվա ամառը,
ապա պետք և անմիջապես սկսել պայքարը նրա գեմ
և թույլ չտալ, վոր նա բազմանա և ուժեղ կԼըզով

տարածվի: Պետք է ասել, վոր Լվիճի դեմ ավելի հեշտ
և պայքարել, յերը կաղամբը դեռ ջահել և և քիչ ան-
բններ ունի, քան յերը կաղամբը մեծացել է:

ՊԱՅԿԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Կաղամբի Լվիճի դեմ կարելի յե պայքարել հետե-
վյալ միջոցներից վորևե մեկով:

1. Կանաչ ոճառ կամ սուլորական լվացֆի ոճառ:

Լուծույթը պատրաստում են հետևյալ կերպ. 400
գրամմ կանաչ ոճառ լաց են անում քիչ տաք ջրի մեջ
(լվացքի ոճառը արագ լուծվելու համար մանրացնում
են): Ոճառը լուծվելուց հետո ավելացնում են ախրան
ջուր, վոր ընդհանուր լուծույթը հալառար լինի 24
լիտրի (2 գույլի):

2. Ծխախոտի եքստրակտ:

400 գրամմ ծխախոտի փոշին թրջում են 2-3 որ 6
լիտր (1/2 գույլ) ջրի մեջ և ապա յեփում են 3-4 ժամ և
քամում: Ստացված լուծույթին ավելացնում են 24
լիտր ջուր: Այս հեղուկը միջատների մարմնին լավ
կպչելու համար պետք է ավելացնել 50-100 գրամմ
ոճառ:

Ծխախոտի եքստրակտը պետք է դործածել պատ-
րաստելու որը, վորովհետեղ յերը յերկար է մնում,
սկսում և փչանալ: Ծխախոտի եքստրակտը ձախվում
է պատրաստի: Վերցնում են 12 լիտր (1 գույլ) ջրին
200-400 գրամմ եքստրակտ:

3. Նավթա-ոճառային եմուլսիա:

400 գրամմ սովորական ոճառը լուծում են կես գույլ
տաք ջրի մեջ և վրան ավելացնում 2 1/2 կիլո նավթ:
Պառնուրդը ճիւղտի խրճով ախրան են հարում, վոր

1000
35637

տապփի սերի խտուրթյան ծիառարը սպխտակալուն
եմուլիա: Արսկելու ժամանակ դրա վրա ավելացնում
են 4 դուլլ ջուր:

Այս եմուլիան պետք է դարձադրել պատրաստե-
լուց անմիջապես հետո, հակառակ դեպքում նավթը
կանջատվի խառնուրդից և կայրի բույսերը: Չի կա-
րելի սրսկել չոգ յեղանակին, վորովհետև այս դեպք-
քում ել բույսերն այրվում են նավթից:


Լվիճի դեմ պայքարելիս պիտի հիշել, վոր սրբու-
վող դեղը ողնում է միայն այն դեպքում, յերբ այն
ընկնում է միջատի մարմնի վրա, դրա համար ել պիտի
աշխատել հոսանքը ուղղել լվիճների խմբի վրա. վոր-
քան շատ դեղ ընկնի լվիճների վրա, այնքան պայքա-
րի հետեվանքները կլինեն դրական:

Արսկիչներով բույսերը սրսկելիս ավելի հարմար է
այդ աշխատանքը կատարել յերկու հոգով: Մեկը բարձ-
րացնում է կաղամբի տերևները հակառակ կողմի վրա,
մյուսը սրսկում է՝ աշխատելով հոսանքն ուղղել իրեն
խսկ լվիճի վրա: Յեթե առաջին սրսկումից հետո
կնկատվի, վոր լվիճը չի սատկել, ապա մի 2-3 օրից
հետո պիտի նորից սրսկել:

Բացի պայքարի վերահիշյալ միջոցներից պետք է
բանջարանոցի ամբողջ տարածութունը լավ մաքրել
մոլախտտերից: Բաղահանած մոլախտտերը վոչ մի կերպ
չի կարելի թափել բանջարանոցի պատերի տակ, այլ
պետք է հավաքել այրել կամ հողի մեջ խորը թաղել:
Միայն այդ դեպքում կարելի յե ապահով լինել, վոր
լվիճները ձվերը կվոչնչանան: Մոլախտտերը պիտի հա-
վաքել և այրել— մինչև դարուն թույլ չսպառվ ծրծ-
վելու թրթուրներին:

ԲՈՍՏԱՆԻ ԿԱՄ ԲԱՄԲԱԿԻ ԼՎԻՃ

Բոստանի կամ բամբակի լվիճը շատ ուժեղ կերպով
տարածվում է բանջարանոցներում, բոստաններում և
բամբակի վրա: Մեղ մոտ նա առանձնապես վնասում
է վարունդին, դուլթմային, ձմերուկին և դդումին:
Լվիճի ծծելուց մատղաչ տերևները ծուլվում են ու չո-
րանում:



Նկ. V. ԲՈՍՏԱՆԻ ԿԱՄ ԲԱՄԲԱԿԻ ԼՎԻՃ

a. Թեվավոր եզր (տեսքը վերինից), ab. նույնը (կողքից),
bc. թրթուր, d. անթեկ եզր մեծացրած:

Լվիճների ծծելուց առանձնապես վնասվում են
վարունգն ու դուլթման: Այդ կուլտուրաների վրա
լվիճների չափազանց զարգանալը նրանց ուղղակի վո-
չընչացնում է, վորովհետև բոլոր տերևները դեղնում
են ու չորանում:

Լվիճները մի հեղուկ են արտաթորում, վորով
ծածկվում են վոչ միայն տերևները, այլև բույսի տակի

հողը. այդ արտադրութեան վրա նստում են սոււնիքը,
փորոնք սեւեւացնում են բույսը:

Վաղ դարեանը ջահել կանաչա-մոխրագույն լվիճին
կարելի չէ հանդիպել արախի յեղրերի և միջնակներին մո-
լախտաների վրա, սոււնների և ճանապարհների մոա-
վերսհիշյալ վայրերից նա անտիճանաբար անցնում է
կուլտուրական բույսերին հասկացրած հողամասերի
վրա: Այստեղ լվիճը նախ տեղափոխվում է մոլախո-
տների վրա, փորոնք մնացած են լինում վատ վարի հե-
տեւանքով, էսկ հետո, յերբ դուրս են գալիս կուլտու-
րական բույսերի ծիւրերը, անցնում են նրանց վրա և
սկսում արագ կերպով բազմանալ. այս լվիճը ձու չի
ածում, այլ ծնում է փոքրիկ թլթուռներ, զսան հա-
տեց վոչ պակաս (նկ. 6):

Այդ թրթուռները կերակրվելով հինց բույսերի
վրա, 6-7 որվա ընթացքում դառնում են հասուն լվիճ-
ներ: Այդ լվիճներն իրենց հերթին սկսում են ծնել կեն-
դանի թրթուռներ: Այսպիսով լվիճը կենդանի թրթու-
րներ ծնելու միջոցով արագ կերպով բազմանում ու դար-
դանում և ամառվա ընթացքում տալի է 15-20 սե-
րունգ:

Մոտավոր հաշվով ամառվա ընթացքում մի լվի-
ճից ստացվում են միլլիոնավոր լվիճներ: Յեւ յեթե
նրա դեմ պայքար չտարվի, նա ամբողջապես կրունի
անրևներն ու ջահել ծիւրերը:

Լվիճը մինչև հետեյալ դարունը ձմեռում է մոլա-
խտաների վրա, ահա թե ինչու սլիտի վոչնչացնել թե
դաշտերի և թե միջնակների մոլախտաները:

Բանջարանոցային լվիճի դեմ պետք է պայքարել
նույն միջոցներով, ինչ միջոցներով պայքարում են
կաղամբի լվիճի դեմ:

<< Ազգային գրադարան



NL0282856

18038